


ՔԱՌԱՆՈՐԻՍՏՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ	համար
Տարեկան	12 Գր
Վեցամսեայ	6 "
Արտասահմանի	
համար տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "

Անտրիկայի	համար
Տարեկան	3 Գր
Վեցամսեայ	1.50 "

Մանուցանել տող տուրիսի երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ. Ե. երեսին տեղի անգլալեզու համար 20 0/0 զեղչ կըլը

Ըստ: Վառնայի համար ձևով 10 սանթիմ



Mechtharstengasse
W. 4.
(Austria)

Левинъ и Коульманъ
бульваръ Николаевъ
г. Варна
Дня на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgarie)

Արտասահմանի համար
ձևով
(20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարիոյ համար
ձևով
(15 ՍԱՆԹԻՄ)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԵՐԱԿՈՒԹ ԶՈՐԵԲԵՆԱԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Գրութիւնք ևս չեն տրուիր

ՇՆՔԹՈՒՄ Ի ԲԱՌԱՆՈՐԻՍ ԳՐՈՒՈՐԸ ԲԱՌԱՆՈՐԻՍ ՊԵՏՐ ԵՒ ԿԱՆԱԿՎ ՎԶԱՐԸ

ՄԱՀՈՒԱՆ ՊԱՏԻԺ

Սաւոնի Պատ. կեդր. կոմիտէի վճռով՝ յուլիս 23ին տէսօրի է ենթարկւած կարմուշ գիւղի ռէս Սհակ, իր կատարած Մատ. նութիւնների պատճառով:

ՍԱԼ. ԿԵՂԻ. ԿՕՄԻՏԷ

Սաւոնի Պատ. կեդր. կոմիտէի վճռով՝ հոկտեմբեր 28ին տէսօրի ենթարկուեցաւ Մշոյ գաւառի Հաւրան գիւղի ռէս Գրիգոր. որ յայտնի էր տարիներէ ի վեր իր կատարած մատնութիւններով և թիւրք կառավարութեանը մատուցած ծառայութիւններով:

ՍԱԿԱՅԵՆ ՇՐՋԱՆԻ ԿՕՄԻՏԷ

Խ...ի տեղական մարմնի վճռով և Սաւոնի պատասխանատու մարմնի համաձայնութեամբ՝ սեպտեմբեր 25ին տէսօրի ենթարկուեցաւ նախկին յեղափոխական Աւազը. ոչ կտորածներէ յետոյ կալմակերպական զէնքեր յանձնած էր քիւրտ աղային ու ինքն ալ անոր մօտ ծառայութեան մտած էր:

Խ...ի ԿՕՄԻՏԷ
«Իրօջակ»

ՇԱՐՋՈՒՄ

«Միութեանական» ճիւղի շարժաւորներն են, որոնց անհեթ թեթեւութեան և տրամաբանութեան անկարողութեան մասին արդէն խօսած ենք ու չենք ուղեր փաստերը անգամն ալ կրկ. ել:

Նոյն պատիւը, չախալու մարտիկն են, որ իրենց այս ու այն անկիւններու մէջ ծամած ծամկուտած քարոզները կոչի մը մէջ ամփոփելով կը հրամայեն հասարակութեան: Նոյն կրկնութիւնները, նոյն հակասութիւնները, նոյն հինցած ու գոյութեան իրաւունքէ զուրկ վերլուծումները, նոյն դատարկ և սնամէջ ֆրազները—ահա՛ այդ մեծ պահքի շափ Երկար կոչին պարունակութիւնը:

Իրականութեան ուժեղ ու անզրգուելի պահանջներով կողմնորոշուած հայ լեզու կուսակցութիւնները, գործեր, զորացր և ուժեղ արմատ ձգեր ժողովրդին մէջ՝ մինչեւ այժօր ալ անուսարատի ազդելով թշնամիին վրայ:

Հիմա ելեր են կարգ մը շարժաւորներ և ֆրազ մը հրապարակ նստելով կուզեն իրականութեան առջեւ թուժա կանգնեցնել, կուզեն գետի հոսանք փոխել: Եւ այդ մարդիկը իրենց սեփական փորձի ցաւը ունին: Անոնց այսպէս կոչուած մասնախումբի նախագահները զուրս վաճառուած յեղ. ամէն լուջ շրջանակէ, յաւետ արտաքուտ յեղափոխական «մարմիններէ» իրենց դատարկապարտութեան և եսասիրութեան մէջ խելակորոյս չեն գրտեր ինչ ընեն ու իրենց նապատակի խելքին վրա տալով հնարներ են ֆրազ մը— «Միութիւն», միութիւն, որ Հայաստանն ազատի: Ի հարկէ այդ մարդիկը ունին այնքան համեստութեան և կը խոստովանին, որ իրենք չեն, որ պիտի ազատեն Հայաստանը, այլ յեղափոխական կազմակերպութիւնները, եթէ անոնք միանան: Իսկ մինք այդ շարժաւորներուն կըսենք, թէ իրենց հանգստութիւնը թող չի վրդովեն և կեցած տեղերին մնան, կուտի մէջ նետուող և ամէն ինչ զոհող յեղափոխականները այդ կընեն առանց բռնազրօսիկ կատակերգութիւններու ալ: Այդպէս կատարուած միութիւնը մեծք տեսանք թէ ինչ եղբայրադատ և ոճրագործ վերջաբան մը ունեցաւ տեղի առով Լճուտ, նի և Ռուսիոյ մէջ կատարուած անլուր շարժողութեանց:

Եւ գիտէ՞ք ինչ միջոցներով միացնել կուզեն յեղ. կազմակերպութիւնները:— Անոնց հայհոյելով:

Արդարեւ այդ տիպի շարժաւորներ մեր կեանքի մէջ ցեցեր են, որոնց համար ի հարկէ յեղափոխականները ունին հեզ-

նակաւն մարտ մը և խոր արհամարհանք միայն:

Այդ «կոչում» մասին այսչափ ան ալ ժամանցի համար:

Մարգարէտնի

ՍՈՒԼԹԱՆԸ ՀԻՒԱՆԳ

Անցեալ անգամի մեր հազորդած լուրի մանրամասնութիւնը ահա՛ ծայրէն վիճակական թերթը սոյն թղթակցութիւնը ստացած Կ. Պօլէն: Եւ ընտրելով մէջ Բուրպան-Պայրամի առթիւ եղած շքեղ ընդունելութեան միջոցին աչքի ինկած է Սուլթան Ապտիւլ-Համիտի ճշուած տրամադրութիւնը և բռնած զիրքը: Թէ պալատի բարձրագոյն պաշտօնեաներուն և թէ օտար պետութեանց ներկայացուցիչներուն, որոնք ընդունելութեան ներկայ էին, կասկածելի երեւցած է Սուլթանի վիճակը: Ապտիւլ-Համիտը զողջօղուն և անհաստատ քայլերով մտած է ընդունելութեան դահլիճը: Գունատ, յոգնած, ինք իր մէջ ամփոփուած և մտածկոտ անցուցած է ան արեւելեան շքեղ հանդէսը որ ըստ սովորականիս սեւած է երկու ժամ, Հակառակ Վիլհելմի ի վեր տիրած սովորութեան սյս անգամ Սուլթանը ոչ մէկուն չէ բաշխած նշաններ, նուէրներ և աստիճաններ, չնայելով որ պալատի պաշտօնէութեան կողմէ մեծ ցանկ մը պատրաստուած էր:

Իացառութիւն կը կազմէ Եւրոպայի ոստիկանապետ Ռահիբ փաշան, որ ստացած է զօրավարի աստիճան, Բարձրացած են նաև Եւրոպայի վարի Շաքիր փաշայի, Սոնաթթարի վարի ի հրամանատար՝ Նասիր փաշայի աստիճանները:

Կըսուի թէ Սուլթանը ծանր հոգերէ մաշուած շատ հիւանդ է: Անոր վրայ մասնաւորապէս վատ կազդէ օլպանական հարցը: Ան կը վախնայ, թէ զժգոհ, անհազանդ և ապստամբ սլաւոնացիներու պատճառաւ իր զէմ պիտի գրգռէ անոնց ազդեցիկ և զօրաւոր ցեղակիցները, որոնք պալատին մէջ մեծ դեր կը խաղան: Սուլթանի սէկ սերելին, Եւրոպայի գաղտնի ոստիկանութեան շէֆ Ահմետ ձէլալեաթին փաշայի փախուստը և ուրիշ շատ մը անհաճոյ դէպքեր միասին գաղթ Սուլթանի առանց ատոնց ալ ակար առողջութիւնը բոլորովին քայքայած են: Սուլթանի կոմիտէի մէջ մէկ Սուլթան փաշա երկրպագական կատարարութեան Ահմետ ձէլալեաթ-

տին փաշայի յանձնուելը խնդրեց թէ և, բայց ստացաւ մերժում:

Սուլթանի ազգանցիին ստորճանին անպատեղի կերպով կատարուած բարձրացումը Պօլսոյ դիւանագիտական շրջաններու մէջ հիացմունք յառաջ բերած է: Այդ անձը, Սուլթանի թիկնապահներու շէֆ Ռահիբ փաշա, Ալպանիոյ Շքօտրա վիլայէթէն առած է իր ծագումը: Ռահիբ փաշա առաջին զինուորականն է, որ ի վարձատրութիւն իր տիրոջ անձին համար կատարած ծառայութեան կըստանայ զօրավարի աստիճան, Ան Սուլթանի ծառայութեան մէջ մտած է իր տիրոջ գեղ իշխան եղած միջոցին, ինք եղած է—ինչպէս կըսուի—փողոցներ տալ յատակող աշխատուոր մը կամ պարտիզայան մը:

Ապտիւլ-Համիտ, անոր Գարատաղցիներու հետ ունեցած մէկ կողմին մէջ ցոյց տուած քաջութիւնը տեսնելով զայն առած է իր ծառայութեան մէջ:

Ալլահ, Ալլահ, Սուլթանի առողջութիւնը քայքայուած է, երբ պիտի սատկի արդիօք մարդակեր գազանը:

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԱՍԻՍԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ահա պատերազմի առաջին ամիսը լրացաւ և մենք պէտք է խոստովանինք, որ ան ճարտարակներու համար բերուած զեղեցիկ արդիւնքներ և յաջողութիւններ, Փետրուար 8ին և 9ին Բորթ-Արթուրի առջեւ տեղի ունեցած յարձակումները որոսական նաւատորմի զգալի կերպով տկարացուցին և գայն դատապարտեցին—գունէրուական ասանուան համար—անդործութեան: Յամենայն զէպօ դէռ յայտնի չէ թէ այդ յարձականքը ճարտարակներու անվիճելիորէն աննոյր կողմն է: Եւ նորիւ որոսական նաւատորմի կըրած պարտութեանց ճարտարակները հասան իրենց ցանկութեան և դարձուր երազին՝ տիրելով Քօրէյիին: որը կատարուեցաւ առանց տրիւն թափելու:

Դէպի դրացի թերակղզին կատարուած արշաւանքներու տոտայելը՝ այսօր իրականացաւ: Ըստ աւանդութեան Ալեկու-Թեննօ զօրավարը ժամանակով նաւատորմի մը առած արշաւանք գործեց Քօրէյի վրայ: Անոր կինը Սօհօ Հիւէ ծովին վրայ իշխող լեռ մը բարձրացաւ և ամուս-

նոյն հրաժեշտի ողջոյն տուաւ : Երբ նաւատորմիդը հորիզոնէն անհետացաւ, Սոսո Հիմէն սկսաւ սաստիկ լալ . արցունքները ամբողջ գէժքն ու մարմինը թրջելով վար կր հօսէին, մինչեւ որ սգաւոր կիներ ժայռերուն վրայ քարացաւ : Ամուսինը, ողբացող զիցուհին, մինչեւ այսօր դեռ կեցած է ժայռերուն վրայ, իրրեւ վկայ այն սուգին ու ցաւին, որ Քօրէան նուաճելու համար մղուած դարեւոր պատերազմները ճարտնացի կիներուն բաժին տուին : Դէպի Քօրէա եղած յաւիտենական արշաւանքներու զրոյցը մինչեւ ճարտնական գիցարանութիւնը կը հասնի : Ետայ թոյլ թագաւորը կիւնէր ճարտնի վրայ, երբ Աստուածները անոր ողորմեցան, ցցուցին Քօրէան և ըսին . « Երբփօն-էն ո՛չ ինչու, ծովի ալիքներէն անդին երկիր մը կայ, ուր ոսկի ու արծաթ կը հոսին, գնա և իշխէ այդ երկրին վրայ » : Ետայ չկրցաւ օգտուիլ այդ պատգամին և մեռաւ զիցիցիկ յուսերու մէջ ձգելով իր ֆինքս Կօքս այրին . կայսրուհին աղաչելով Աստուածներուն, որ իր մահը ուշացնեն, փառաւոր նաւատորմիդով մը ճամբայ ելաւ զիցի Քօրէա : Ծովի բոլոր ձկները՝ մեծ ու փոքր, կը նկերակցէին կայսրուհուն նաւերուն, որոնք կարճ պատերազմէ մը ետքը նուաճեցին Քօրէան : Հայրենիք վերադառնալով ֆինքս Կօքսն զաւակ մը ունեցաւ, որ Հօշիման անուանուեցաւ և իր պատերազմի Աստուած պաշտուեցաւ :

Այս երկիրը, որ ասկի արծաթ կը հոսին, այսօր դրեթէ ամբողջովին ճարտնացիներու ձեռքն է ընկած : Դաշնագրի մը մէջ Քօրէայի կայսրը կամաւ զինքը Միկատօ-ին վաստակ է յայտարարած . քօրէական բանակները կը միանան ճարտնական զօրքին, պատեթեան մատակարարութիւնը կը

կատարուի ճարտնական պաշտօնեաներու միջոցով : Քօրէական ու թր նաւանգիտներէ ճարտնական զօրքը ցամաք ելաւ և Սէուլի կայսերական պալատի վրայ ծածանեց ճարտնակ գրոշակը կարմիր արեւի ճառագայթներով : Եւ իրօք այդ երկրին համար կարճ ժր պատերազմ մը յանձն առնել, Արեւելեան Ասիայի մէջ ոչ մէկ երկիր Քօրէայի պէս պողոպր ու բնական բերքերով հարուստ չէ : Անկասկած իր դանձերը դեռ չեն սկսած շահագործուիլ, հողագործութիւնը, հանքայն արդիւնաբերութիւնը մինչեւ այսօր բոլորովին լքուած դրութեան մէջ են : Եւ, չնայելով որ Քօրէան ոսկիի, արծաթի, պղնձի, երկաթի, անուիի, անագի, քարեղի եւն, հարուստ հանքեր ունի : Այս երկրի հարուստեթեան բնական աղբիւրները ճարտնացիներուն լաւ յայտնի են, ճարտնից համար Քօրէան ունի նաեւ ռազմական մեծ նշանակութիւն, ան կը կազմէ կամուրճ մը զէպի ասիական ցամաքը և այս պատճառով է, որ ճարտնացիները դարեր շարունակ իրենց նայուածքները անձկազին կերպով ուղղեցին զէպի Քօրէան և մղեցին ռազմաթիւ աշխարհակալական պատերազմներ : Հէտէ վարդէք շատ նըպատաւօր կը նկարագրէ Քօրէայի կըլիման և զայն կը համեմատէ հիւսիսային Սպանիոյ հետ :

Քօրէայի միջին և հարաւային մասերուն մէջ ոչ միայն կը հասնին ընդեղեններու բոլոր սեսակները, այլև բամպակ, կանեփ, վուշ, ծխախոտ, լեզակ, խաւարիւ և ինչ որ կարեւոր է՝ բրինձ, որ ահագին քանակութեամբ կը զրկուի նաեւ ճարտնիս : Հարաւային կողմը ասեղմէ գատ կան նաեւ եւրոպական պատեթներու մեծագոյն մօսը, աղիւ չաքանակ, կիդրոն, կրանատայի խնձորներ, նոյնիւկ արմաւ և խաղող, երկրի

հիւսիսային կողմը կան բազմաթիւ անտառներ : Ետու գետի կողմերը գտնուող փայտի անտառութիւնը ուսուրբէական նոր անտառներ անկելու պատճառ եղաւ, պարագայ մը որ նըպատեց ճարտնի և Ռուսիայի միջեւ եղած հակառակութեան : Ինչ որ այս երկրին ամենէն շատ կը պակսի՝ հարազատ թեան ճանապարհներն են : Գարտնիս արդէն սկսած է Սուսանէն մինչեւ Սէուլ երկաթուղիի գծի մը կառուցմը, որ պապագային շարունակուելով զէպի հիւսիս մինչեւ Ետու պիտի հասնի և պիտի կապուի ուսուսանչու թական գծին հետ :

Ամենէն առաջ սակայն Քօրէան կը կարօտի պողոսաներու, և ճարտնացիք իրենց ներկայ գործողութիւններու մէջ կանոնաւոր ճամբաներու պահար խիստ պիտի զգան : Գարտնացիները իբրեւ ճիւղ ռազմազորանք անուն հանած են : Ուսուր իրենց քաղաքակրթական առաջին գործը պիտի ըլլայ ճանապարհներ շինելը . որովհետեւ լաւ հողորդակցութիւններով պիտի կարողանան երկրի գանձերը շահագործել ու պաշտպանել : Այն կարեւոր գանձերը, զորս մէկ ամուսան մէջ և գրեթէ առանց արեւնահեղութեան ժառանգեցին : Քօրէայի վերջնական գրաւումը թնթիւնները պիտի վճեն, որոնց որոտը Ետու գետին և Բորթ-Ղրթուրէն պիտի տարածուին ամէն կողմ :

Վիեննա, Ն. Ֆ. Պրեսսի

ԴԱՅՆԱԿԱԿԱՆ ՔԷՍԱՅԻՆԵՐՈՒ ԿՈՒՒՐ ԲԱՍԵՆՈՒՄ

Ինչքո ուսական սահմանագրիւնէն «Կրօ Արմէնիայի» գրուած է հետեւեալ նամակը :

ԶՍՊԻԱԾ ԲՐԻԺԸ

Նուէր Ա. Ահարոնեան Աին Ա.

Լերան ստորոտում, վճիտ աղբերակի կշարն նստած հանգստաւում էին երկու ճամբորդներ : Թէև աւազան խիստ շոգերի օրերն էին, արեւի ճառագայթները, իբր բոցերի խուրջ ընկնում երկրի վրայ . այրում էին մարդկանց, խանձում կանաչը, բայց այստեղ լեռներում զով էր օդը, մեղմ եւ անուշ : Կար եւ դուրեկան բարակ քամի, որը է՛լ աւելի զրաւի կերպարանք էր տալիս : Եւ երկու ճամբորդները, ձգուած կանաչ խոտի վրայ . թիկն տըւած քարին, վայելում էին դրա ամբողջ քաղցրութիւնը, սսես վճռել էին ընդմիջ աճալ այնտեղ, չբաժանուել այդ աղբիւր այդ կանաչից այդ լեռներից...

Նրանք երկուսն էլ ծեր էին, երկուսն էլ երկար տարիների կեանք տեսած : Մէկը լուռ էր, թախտա եւ մտազրաղ . միւրը ուրախ եւ անդադրում խօսում, զրուցում էր : Երկու հակադիր անձնաւորութիւններ : Աւօն հայեացքը յառած քլքլացող աղբրին նայում, հետեւում էր նրա ամէն մի շարժմանը, դիտում նրա խրաքանդիւր ալիքը, իրաքանջիւր շփոցը, ասես այնտեղ, նրանց ծաղիկներում մի բան, մի գաղտնիք էր ու

րոնում, ասես ուզում էր նրա լեզուն հասկանալ, Եւ նրա սիրտը աղմկում էր : Հէնց առաջին նայածքից զրակեց նրան այդ աղբիւրը, այդ շփոցը, թէ ինչու, չգիտեմ. Աւօն թւաց, որ իր Աւօնն է հեծկլում, ասես նրա արեան հեծկլոտն է լըսում : Նայեց Աւօն, նայեց եւ կպաւայդ քլքլացող, խօսող ալիքներին եւ անցածի վէրքերը, մէկը միւսից անտար, մէկը միւսից դասն, պատկերացան նրան եւ սիրտը, Աւօն քար սիրտը ճալում, ցաւում էր դրանց տակը...

Բայց Միսա Զօնը, այդ կինը ուրախ էր . պատմում էր նա շատ բան, խօսում էր ողբերգական, միանգամայն յափշտակաւ : Պատմում էր նա երեւելի աշխարհներից, Տիրոջ կեանքն էր նկարագրում, Քրիստոսի հրաշագործութիւնները թւում, Աւետարանից, սուրբ գրքից էր խօսում :

Բայց ո՞վ էր այդ կինը, ի՞նչ գործ ունէր նա այս լեռներում եւ վերջապէս ո՞ւմ համար էր խօսում : Այդ կինը, աւելի ճիշտ, պառաւած օրիորդը, ամբերկացի միսթօնարուհի էր : Մահմետական աշխարհը դեռ դարեր ստալ գրաւել է աւետարանի քարագիշտներին, որոնք մարմին հագած, պաղկը մէջքերին, ցուպը ձեռքերին, շրջում էին ահագին տարածութիւններ, կտրում, անցնում ձորեր ու լեռներ եւ անընդհատ խօսում, տարածում Քրիստոսի խօսքերը : Այս միսթօնարուհին, Միսա Զօնն էլ զրանց շաղկով է գնում,

նա էլ հազարաւոր վերստեր է անցել, ճեղքել է սար ու ձոր, եկել է այստեղ, մահմետական այս աշխարհը «Նոգիներ փրկելու», աւետարանի խօսքերը սերմանելու և Եւ նա սրբութեամբ կատարում է իր գերը . անընդհատ նա պատմում, քարոզում է խօսում է ամէն տեղ, ամէն ժամանակ, թէ տան յարկի տակ, թէ զպրոցում, թէ խնջողների միջոցին, թէ հասարակական հրապարակային ժողովարաններում. մի խօսքով միշտ, ոչ մի առիթ բաց չեն թողնում. ուզում են խօսել քարոզել...

Եւ այժմ էլ Միսա Զօնը խօսում էր, խօսում խիստ ողբերգական, Լերան ստորոտում, նստած լուռ, մենմենակ, խանգարող չկայ, է՛լ դրանից յաւատիթ, յարմար բոպէ. ու մահաւանդ ասանձին պատճառ կար աւելի մղում, աւելի ոյժ տալու : Նրա դիմացը Աւօն է, այն անհաւատ լուռ եւ խորհրդաւոր ճերմուհին . նա նոյնիսկ վերաուրում էր համարում իրեն որ այսքան երկար խօսում, քարոզում, կրօնական ջերմեանդութիւնները շնչում, սարսափ աղբում, բայց դիմացին ծայր է, սառն եւ միանգամայն էր կանչում իր երկար տարիների փորձառութիւնը, ամբողջ իր հաւատի թափը . իր օղջու խօսքերը, բայց ժայռը, այդ տարօրինակ ծերունին ամեն ինչ ընդունում էր մի հատիկ հեգնական հայեացքով, մի դառն ժպիտով, Եւ այդ

«Ապառմբեր 15/ին, Կ. գիւղի մեջ արտակարգ իրարանցում մը կը տիրէր, գիւղացիները ամեն կողմերէ ուրախ գէժքով կը վազէին . խորհրդաւոր բան մը կար ամէն տեղ :

Գիւղացիք ճիգ կը թափէին որքան կարելի է մեծ պատուով ընդունելու 53 ձիաւորներէ կալմուած Ֆէտայիներու խումբը, որ թիչ ատենէն պիտի անցնէր տանջանքներու երկիրը՝ օգնութեան ձեռք կարկառելու կորուստի մատնուած հայրենիքին :

Գիւղքը, այս ալատութեան ուսմիրանները հաւաքած էին զիւղի եկեղեցին՝ խոստովանելու և հաղորդուելու, կամ աւելի ճիշտ, զիւղական քահանայի բերանէն խօսելու իրենց մահուան վճիռը : Բոլորի ղէմքին վրայ ուրախութիւն կը փայլէր և բոլորեքեան ուղիղ կը նայէին մահուան վրայ և բնաւ չէին վախնար : Կղատութեան զինուոր մահ կարճամարտէ :

Սոցի այս 53 հեծելազօրքը, ուրիշ գիւղի մը մէջ միեւնոյն տուն 91 զինուորներ ևս հաւաքուած էին . ասոնք հետեւակ էին :

Ամսի 16/ին, առաւօտեան ղէմ գիւղական եկեղեցին լեցուած էր զիւղացիներով և զինուորներով : Քահանան պատարագ մատուցանելէ յետոյ, օրհնեց Ֆէտայիներու գրօշակը և քարոզ մը խօսեցաւ : Քահանայի խօսքերը կը վառէին Ֆէտայիները և զանոնք

սպանում, խիստ հարածում էր միտ ձոնին :

—Այո՛, այո՛, Աստուած թէև շատ բարի է, շատ ողորմած, բայց քեզ, Աւօ, քեզ չի ների . դու լաւ չես հաւատում նրան, դու չես արժանանայ նրա երկնային արքայութեան նրա երկնային ժպիտին . դու կը զուրա մի մոթ, սարսափելի աշխարհ, ուր կայ միայն անձաճեղք, ու գնում են բոլոր շարագործները, այո՛, բոլոր անհաւատները, Գրա անուր, Աւօ, դժոխք է այո՛...

Յանկարծ լոկց միսթօնարուհին, նա սսես որպէս շանթաւաւում յիտ մղել, ասես մի խիստ ապտակ, մի գորեղ հարած ստացաւ : Աւօն, որ մինչեւ այդ պահուն լուռ դիտում էր աղբրի ալիքները եւ միանգամայն գերի էր դառել իր ցաւաւ խոհերին, գլուխը դանդաղ քարձրացրեց և հայեացքը ուղիղ ընեւեկց միսթօնարուհու վրայ : Խիստ, շատ խիստ էր այդ նայածքը, ասես թոյն, դառն լեղի էր կախում նրանից, Եւ ասես Զօնը անկարող եղաւ տանել այդ հարածը խիստ էր, նա շփոթեց, կորցրեց խօսակցութեան թելը, սարսափեց այդ մի հատիկ լուռ, անխօս նայածքի առաջ եւ չլմած կանգ առաւ :

Անձանոթ չէր միսթօնարուհուն Աւօի թուրտ հայեացքը, հեգնական ժպիտը, սիրտ ծակող քրքիջը, նա այդ բոլորի դառնութիւնը շատ է ծծել, դրանց անողոք հարածը շատ է կրել, Բայց ոչ մի անգամ, ոչ մի

վճարակաճութեամբ կը զօրացնէին... անկարծ իր շուրջառի տակէն հանդիսաւոր վայրկեանին կորստի մը հանելով ազազակեց... Սիրելի զաւակներս, ահա ասիկ սուր մը իմ հորմէս ժառանգած... ան իր մահուան օրը զայն ինձ տուաւ և երգողը ցուց զիս երբէք չը մոռնալ այս զէնքի սուրբ այգ օրէն շատ տարիներ են անցեր, ևս քահանայ ելայ, բայց երբէք չեմ մոռցեր այս սրբազան սուրբ ուժը... ի՞նչին հետ պաշտած եմ և սուրբ, որովհետեւ ես գիտեմ որ յալթանակը լիկ սուրով կրնանք պահել ու

Երբ քահանան խօսքը վերջացուց, ֆէտայիները մի առ մի համբուրեցին օրհնուած գրօշակը և եկեղեցիէն դուրս ելան:

Փոքրիկ խումբը պատրաստ էր մեկնելու... ֆէտայիները որքէ մինչեւ գլուխ զինուած էին, բայց գիւղացիները զանոնք առանց պարզ ծաշով մը պատուելու չէին ուզեր ձգել: Ամսի 17ի երեկոյեան, մեծ հացկերոյթ մը սարքուեցաւ, որու միջոցին ֆէտայիները ուխտեցին երբէք չը դաւաճանել ազատութեան զէնքին ու հաւատարիմ մնալ իրենց կոչումին:

Ճաշէն յետոյ ֆէտայիները մեկնեցան:

Հաղիւ օր մըն էր անցեր իրենց մեկնումէն, երբ իմացանք թէ ֆէտայիները մեծ կռիւ մը էին մղեր:

Հետեւակներու խումբը հեծեւազօրքէն օր մը առաջ արդէն մեկնած էր կարճ ճամբով մը, բայց իր մեկնումի երկրորդ գիշերը կը հանգիստի քիւրա հովիտներու, որոնք ազմուկ կը բարձրացնեն... ատոր վրայ խումբը կը ստիպուի ուղղութիւնը փոխել իր անցքը ծածուկ պահել: Իայց քիչ յետոյ նորէն կը նշմարուի քիւրտերէն, որոնք կրկնօրին հրացան պարպել: Խումբը չի պատասխաներ և այդպէսով կը յաջողի Արաքսը անցնել:

Լուսաբացին կը սկսի կռիւը Արաքսի ափերուն վրայ, Սերսը՝ 60 տարեկան ծեղուկի մը, քիւրտերու և թուրք զօրքերու բազմաթիւ մէջէն ճամբայ բանալով անմիտս կը հասնի մինչեւ Ք... գիւղը և խոտնոցի մը մէջ փախչելով մաքառումը կը շարունակէ, որ մինչեւ իրիկուն կը տեւէ: Քաջ զինուորը կիցնայ թշնամու գնդակէն վերաւոր:

Այս պահուն ուրիշ խումբ մը կռիւ կը մղէր գաշտին մէջ, հերոսական մաքառումէ կը յետոյ, ֆէտայիները ջրի պակասութեան պատճառով ստիպուած կըլլան իրենց գիւղերը թողնել: Հիմա կը նկատեն թուրք հեծեւազօրքը, որ ձիերը մէկուսի ձգած կռիւ կը մղէին ընկերներուն գէմ, կը վերցնեն անոնցմէ Ց ձի և մուկն իշնալուն կը միանան իրարու հետ ու թշնամու գծերը կտրելով կանցնին ու կաներեւոյթանան:

Միեւնոյն գիշերը, հեծեւազօրքէ կազմուած ֆէտայիներու խումբը Գոմաձոր գիւղը կը հասնի, այստեղ կիմանան, թէ թուրք զօրքեր կան գիւղին մէջ և թէ հետեւակներու խումբը իւղվերէնի մօտերը կռիւ կը մղէ, անմիջապէս գէպի այն կողմը ճամբայ կելլեն:

Ամսի 18ին առաւօտը հեծեւազօրքը Փոյնիկ լեռը անցնելով հետեւակ խմբի ընկերներէն մօտ 20 հոգու կը հանգիստի: Փէտայիները հազիւ թէ գիւղերը կը գրաւեն, երբ կը նշմարուին քիւրտերէն: Սերսիկին կը հասնի նաեւ զօրքը: Տաք կռիւ մը կը սկսի և կը տեւէ տասը ժամ: Ֆէտայիները շնորհիւ իրենց գիւղերու ոչ մէկ կորուստ չեն ունենար, մինչդեռ թշնամին քանի մը տասնեակ զիակներ կը թողու կռիւ տեղը: Գիշերը հասնելուն պէս հայերը գէպի Ռազվերէն կը ճանապարհուին գիշերը այնտեղ անցնելու համար, սակայն չկրնալով մտնել կը գիշերեն Գոմաձորի մէջ: Լուսաբացին կռիւը կը վերսկսուի: Թուրքերը կը ռմբակոծեն գիւղը, սակայն ոչ մէկ ֆրաս չեն կրնար տալ: Ֆէտայիները գրօշակը տանիքի մը վրայ պարզելով կը կռուին երգելով: Մինչեւ ցերեկ թուրք զօրքերը հարիւր ուսմը կը նետեն: Սերսիկին կը դադրի կրակը, երեկոյին վերսկսելու համար: Իրիկուն գէմ, թուրքերը կը յարձակին հայոց գրաւած գիւղերուն վրայ, կը տիրեն

գլխաւոր գիւղերէն մէկուն, բայց ֆէտայիները իրենց ճգնաժամային գրուածքէն ազատելու համար կը յարձակին զօրքերուն վերայ ճակատ ճակտի կռուէ մը յետոյ, թուրք զօրքերը ետ կը քաշուին գէպի Հասան-Գալէ:

Հայերը կը գրաւեն տասնեւչորս ձի և չորս մաւղէրի հրացան: Ֆէտայիները տեսնելով սր գրեթէ այլեւս սրաչար չունին, կը վճռեն սահման վերադառնալ պաշար վերցնելու համար: Ճամբան նորէն կռուի կը բռնուին, բայց կը յաջողին թշնամի բանակի շղթան կտրելով առաջ շարժուիլ:

Հայերը 40 մնաւ և 9 բանտարկուած ունեցան:

Թուրքերն ու քիւրտերը, ինչպէս կը պատմեն մօտ 600 մարդ են կորսնցուցեր, բայց կարնոյ հիւպատոսը՝ թուրքերու և քիւրտերու կորուստը 850 մարդ կը կարծէ:

Բասենի կռիւները ամեն տեղ ահ ու սարսափ են ձգեր: Թուրքերը ու քիւրտերը այս արիւնոտ կռիւներէն խոր տպաւորուած՝ ֆէտայիներու մասին հիացումով ու սուրսփով կը խօսին:

Ֆէտային հաւատարիմ մնաց իր ուխտին և բարձր պահեց իր յեղափոխական գրօշակը:

(Իրո Արմենիա)



տեղ Աւօին առանձնապատուկ նայաւածքը այնպէս չէր ընկճել... խորտակել միսս Ջոնին, ինչպէս այստեղ, այս լեռներում: Այդ նայաւածքը, այդ մի հատիկ նայաւածքը ա՛յնքան բան էր ասում, ա՛յնքան մտքեր հաղորդում, կեանքի փրփոտփայլութիւնը նոյնիսկ յայտնում: Այդ նայաւածքը ասում էր, որ թէեւ դու երկար տարիներ ևս ապրել, բայց չես ճանաչել կեանքը, այդ բարդ հիւսուածքը, մնացել ևս խեղճ ու միամիտ ասում էր այդ նայաւածքը, որ այդ սպառնալիքը, այդ ծիծաղելի խօսքերը գնա երկխոսներէ ասա, մատաղ սերունդին խարիր, նա ասում էր, որ ես քո ասածը չեմ, դու չարաչար սխալում ես: Եւ մի շարք բազմադան մտքեր: Աւօն, այդ խորհրդաւոր անձը առհասարակ ատժըլտու էր խօսելու մէջ, եւ հէնց զրաւում էլ կայանում էր նրա խօսքը, նրա ոյրը: Ժպիտը, քրքրը, նայաւածքն էին կազմում նրա լեզուն, զրանցով էր նա իր միտքը յայտնում:

—Այո՛, դուք, հայերդ լաւ հաւատացեալներ չէք, շարուակեց միսիօնարուհին, երբ մի փոքր հանգստացաւ, ինքեւացաւ հարեւորը նայաւածքին, հաւաքեց իրին եւ զգաց իր գրուածքը: Եւ շղթիւ և մտքովը կողկաւր, եղել եմ ճակատասան, պատել եւ ընդհանրապէս երկիրները, տեսել ըտրը հայիկին, բայց լաւ քրիստոնեաների չպատահեցի, քանիքն էլ անհաւատ են, հեռացել

են տիրով ճանապարհից: Այո՛, հայերը անհաւատ են, եւ հէնց զրա համար է, որ տառապում են, չարչարում, հէնց զրա համար է, որ Տաճկաստանում ձեզ թալանում, սպանում, կոտորում են: Դուք պիտի մտնել լինէք, խանարհ եւ միշտ, անդադրում Տիրով անուեւը, նրա սուրբ խօսքերը մըմնջաք...

—Ան՛ըճ կին, մըմնջաց Աւօն եւ տեղից շարժուց: Վեր կաց, խանրմ, շատ նստեցիք արդէն արեւ թեքւել է, օրը անցել, շուտով առաջներս էլ բացելու է արեան ձորը: Երկիր դալի է:

—Արեան ձոր երկիւղալի՛ է, հեղենց Միսսը, հապա որ ասում եմ թէ լաւ հաւատացեալներ չէք: Իսկական հաւատացեալը ազատ է ամէն վտանքից, ամէն պատուհասից, ա՛յ, ես ունեմ սրա նման պաշտպան հրեշտակ: Սրա սէջ գրեւած է Տիրով ամէն մի խօսքը, ամեն մի ասուածային պատգամը, որ միշտ քաղում եմ, իսկ դու չես չեմ տեսել, որ աղօթես:

Աւօն ոչինչ չպատասխանեց, երեսը նորից շփեց սուր ջրով, վեր կացաւ, ձիերը պատրաստեց, նստեցին եւ լուռ առաջ շարժեցին:

Երկու կողմից լեռները բարձրանում էին ու բարձրանում, կազմում մի երկար, նեղ ձոր, որի միջոցէն գէպի հարաւ էին գիւղում ձերտնի ճամբորդները:

Բայց ի՞նչն է կապել այդ երկու սարօրինակ անձնաւորութիւններին, ի՞նչն է զրգում Միսս Ջոնին պահել

ծառայ Աւօին, այդ սարսափելի մարդին, միթէ՞ նա չէր կարող նրան հեռացնել եւ ուրիշը վարձել: Այո՛, կարող էր, բայց Միսսը ամէն ջանք ամէն եռանդ եւ շնորհք գործ էր դրնում, որ խորը թափանցի, ճանաչի նրա ներքին աշխարհը, այդ տարրինակ, խորհրդաւոր հոգին, անհաւատի հոգին, տեսնի ի՞նչ կայ նրա հոգու ծաղիկի մէջ, բացի այդ այնտեղ մաքուր հաւատ տարածի, նրան լաւ ճաւատացեալը դարձնել: Միթէ՞ տանել կարող է նա, որ յաճախ իր պաշտօնակիցները՝ ի՛նչ հանաքով եւ թէ լուր՞ նկատում են, որ ինքը անկարող է մի կտրուեալ ոչխարը ազատել, դարձի բերել, Աւօն գաւ հաւատացեալը դարձնել: Եւ Միսսը այս հինգ տարի է, որ կոտում, քարոզում, խօսում է, բայց... ստանում է միմիայն հեղեական հայեացք, կիռ երգիծանք: Այդ աւելի է կըրծում միսս Ջոնի սիրտը, աւելի հարեւածում նրան: Ասես մի ներքին եւ զօրաւոր կռիւ է կատարում երկուսի մէջ, կռիւը խորհրդաւոր է, գաղտնի, եւ երկու պառաւ սրտերը աշխատում են իրար փշրել, իրար տապալել... Թէ որի կողմը կը լինի յաղթութիւնը, պարզ չէ, միայն Միսս այդ կռիւը մղելու համար ունի ճարտար լիզու, անսահման եռանդ եւ հաւատ, իսկ Աւօն միմիայն քարէ սիրտ, աննկուն հոգի, խայթող նայաւածք եւ դառն ժպիտ: Եւ երկու սրտերի մէջ շարունակուած է այդ զօրաւոր պատերազմը, կատար

ւում է առհասարակ խուլ, ծածուկ, երբեմն էլ բռնկուած եւ ստանում ահաւոր կնիք, սարսափելի բնաւորութիւն: Կռիւը կատարուած է մէկի կողմից դիտաւորեալ, միւսի կողմից դիպաւածաբար:

Առաջներն էր մի վերելք: Մերուների երկու ճամբորդները բարձրանում էին այդ վերելքը, Աւօն առաջից, իսկ միւսը յետեւից: Միսիօնարուհու միտքը ամբողջապէս կաշկանդել էր Աւօն. նա մտածում էր այդ տարօրինակ, խիստ մութ մարդի մասին, մտածում եւ ասեւ կամաց-կամաց հոգու խորքում տեղի էր ապրիս, համոզուած էր նրա անխօս ասածների անողոք ճշմարտութեան մէջ, իսկ Աւօն, այդ սարսափելի մարդը միանգամայն անձնատուր էր եղել իր անսանձ, այլանդակ մտքերին, այնքան գիրք էր դառել, որ նոյնիսկ մոռացել էր Միսսի ներկայութիւնը: Նա ձիու սանձը բաց թողած, զիտում էր հեռո՛ւն, հեռո՛ւն, եւ անցածի դառն յիշողութիւնները շարան շարան, երկար շղթայ կազմած, գալիս անցնում էին նրա մտքի առաջից: Սեւ մուսլ է այդ շղթան, փայլուն ոչինչ չկայ այնտեղ, եւ նըրայ ամէն մի օղակը ունի իր ուրոյն պատմութիւնը, բայց սեւ պատմութիւն:

Եւ Տ. Թ. Թ. Թ. Թ.

(Շարունակելի)

